Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպում.

ՀՀ Շիրակի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության գործընթացն ամբողջությամբ իրականացվել է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ Շիրակի մարզպետի 2008 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 187 որոշմամբ սահմանված կարգի դրույթներին համապատասխան:

2019 թվականի անցած ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզպետի և մարզպետի տեղակալի մոտ կազմակերպվել և անցկացվել է թվով 36 ընդունելություն, որին մասնակցել է շուրջ 1355 քաղաքացի: Անցած ամիսների ընթացքում առանց գրանցման ընդունելության են եղել շուրջ 2000 քաղաքացի՝ դպրոցների, առողջապահական հիմնարկների տնօրեններ, համայնքների ղեկավարներ, բողոք ունեցող քաղաքացիներ: Սոցիալական աջակցության նպատակով 1205 քաղաքացու դիմումների համաձայն հատկացվել է միանվագ օգնություն:

Քաղաքացիների ընդունելությունների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանի պաշտոնական կայքէջի քաղաքացիների ընդունելություն բաժնում:

Քաղաքացիների ընդունելությունների ընթացքում բարձրացված հարցերը վերաբերվել են բնակարանային, աշխատանքի տեղավորման, առողջապահական, սոցիալական ոլորտի խնդիրներին: Յուրաքանչյուր ամսի ավարտին ՀՀ Վարչապետի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն տեղեկատվություն է տրամադրվել նախորդ ամիս քաղաքացիներից ստացված դիմումների և քաղաքացիների ընդունելության վերաբերյալ:

Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանի նախաձեռնությամբ ստեղծվել է հանրային հաշվետվողականության հարթակ, որի շրջանակներում պարբերաբար անցկացվել են ոլորտային քննարկումներ տարբեր խնդիրների՝ անօթևանության, ճանապարհաշինության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ճանապարհային ոստիկանության, զբաղվածության, սեյսմիկ պաշտպանության, թանգարանների գործունեության վերաբերյալ:

Շիրակի մարզպետի նախաձեռնությամբ ձևավորվել է հանրային խորհրդատուների ինստիտուտ, որի կազմում ընդգրկվել են տարբեր բնագավառներում աչքի ընկած ոլորտային պատասխանատուներ:

Արտաքին կապերի ոլորտում Տիգրան Պետրոսյանն իրականացրել է մի շարք հանդիպումներ ԱՄՆ, ՌԴ, Ճապոնիայի, Եվրամիության արտակարգ և լիազոր դեսպանների, մի շարք երկրների պատվո հյուպատոսների հետ, մասնակցել միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից անցկացված միջոցառումներին: Աշխատանքային այցով մեկնել Մոսկվա: Կնքվել է Համագործակցության հուշագիր Շիրակի մարզպետարանի և «Չին-Հայկական հարաբերությունների տարածաշրջանային զարգացման հիմնադրամի» միջև: Դեկտեմբերի 5-ից 7-ը Չինաստանի Հայնան նահանգ պաշտոնական այցի շրջանակներում, Շիրակի մարզպետը կնքել է միջտարածաշրջանային համագործակցության վերաբերյալ համաձայնագիր: /արտաքին կապերի ոլորտում իրականացված աշխատանքները հրապարակված են աղյուսակի տեսքով/

Մարզպետը հանդիպում է ունեցել մարզում գործող ՀԿ-ների ներկայացուցիչների, գործարարների, առևտրային բանկերի ղեկավարների, մարզիկների և այլ կազմակերպությունների ղեկավարների հետ: Կարևորելով համագործակցությունը տարբեր ոլորտներում՝ Շիրակի մարզպետարանը կնքել է մի շարք հուշագրեր մարզում գործող ԲՈՒՀ-երի և ՀԿ-ների հետ:

Մարզպետի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկում.

2019 թվականի փետրվարի 7-ին տեղի է ունեցել Շիրակի մարզպետի մամուլի ասուլիսը՝ մարզպետ նշանակվելու կապակցությամբ:

Ապրիլի 9-ին՝ մարզխորհրդի 2019 թվականի առաջին նիստից հետո, Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը պատասխանել է լրագրողների հարցերին:

Շիրակի մարզպետը պարբերաբար հարցազրույցներ է տվել տեղական «Շիրակ» ՀՌԸ մինչև լուծարումը, «Ցայգ» «Շանթ» հեռուստաընկերություններին, պատասխանել «Առավոտ»,« Արմենպրես», «Սպուտնիկ Արմենիա», «Հայկական ժամանակ», «Հետք», «Ազատություն», «Հրապարակ», «Շրջապատ», «Շիրակ» շաբաթաթերթերի լրագրողներին հետաքրքրող հարցերին, հյուրընկալվել՝ Ցայգի «Իրականում», Շանթի «Տեսանկյուն» և «Հեռանկար», factor.am-ի «Կարևորի մասին», Սիվիլ Նեթի «Հարցազրույց»

հաղորդաշարերին, հյուրընկալվել Հ1-ին: 2019 թվականի դեկտեմբերի 26-ին մարզխորհրդի նիստի ավարտին Շիրակի մարզպետը անցնող տարվա կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ, ասուլիս է տվել մարզում գործող լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանրային իրազեկման նպատակով՝ մշտապես մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերի մասնակցությամբ կազմակերպվել են հարցազրույցներ ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ:

Մարզպետարանի պաշտոնական կայքէջում նախապես տեղադրվել են մարզխորհրդի նիստերի անցկացման օրակարգերի նախագծերը, ԶԼՄ-ները նախօրոք տեղեկացվել են նիստերի անցկացման օրվա և ժամի մասին և լուսաբանվել են անցկացված մարզխորհրդի բոլոր նիստերը, նիստերի արձանագրությունները տեղադրվել են կայքէջում:

Մարզպետարանի կայքէջում սահմանված ժամկետներում և ամբողջությամբ տեղադրվել են 2019 թվականի անցած ամիսներին մարզպետի կողմից ընդունված բոլոր 643 որոշումները և 340 կարգադրությունները: Մարզպետարանի կայքէջում տեղադրվել են համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները:

2019 թվականի հաշվետու ժամանակահատվածում մարզպետի և մարզպետարանի աշխատակիցների կողմից պատասխանվել են լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ստացված բոլոր՝ թվով 87 գրավոր հարցումներին (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստացված): Մարզպետի և մարզպետարանի աշխատակիցների կողմից չպատասխանված հարցումներ չեն եղել:

Շիրակի մարզի համայնքների և Գյումրի քաղաքի թվով 40 բնակիչների անձնական տվյալներ ուղարկվել են ՀՀ միգրացիոն պետական ծառայություն ՌԴ տարածք մուտք գործելու արգելափակման վերանայման հարցով:

Տեղեկատվության և

հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ Ս. Գրիգորյան

08.01.2020թ.